

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ (ՄԿԾ) ՄԱՍՆԱԳԻՐ

ՄԿԾ-ի անվանումը և մասնագիտության դասիչը	Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա - 056802.00.6
ՈԱՇ-ի մակարդակ	Որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակ (բակալավր)
Որակավորման աստիճան	Ֆինանսական մաթեմատիկայի բակալավր
Բուհը	Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան
Արտոնագրում	Արտոնագրված է ՀՀ ԿԳՆ-ի կողմից (Լիցենզիա N 251-Ա/2, հաստատված 06.04.2016թ. նախարարի հրամանով), մասնագիտության ծածկագիրն է՝ 056802.00.6, կրթական ծրագրի ծածկագիրն է՝ 056802.01.6:
Ֆակուլտետը	Բնական գիտությունների ֆակուլտետ
Ուսուցման լեզուն	Հայերեն
Ուսուցման ձևը	Առկա
ՄԿԾ-ի մուտքի պայմանները	«Ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտության «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» կրթական ծրագրի դիմորդը պետք է ունենա միջնակարգ կրթության վկայական և հաջողությամբ հանձնած լինի միասնական քննություններ «Մաթեմատիկա» և «Ֆիզիկա»/կամ «Օտար լեզու» առարկաներից:
Ծրագրի կառուցվածքը և նկարագիրը	«Ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտության «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» կրթական ծրագրի նորմատիվային ժամկետը առկա ուսուցման համակարգում չորս տարի, ընդհանուր ուսումնական բեռնվածությունը 240 կրեդիտ է՝ տարեկան 60 կրեդիտ (1 կրեդիտը՝ 30 ժամ): ԿԾ-ը նախատեսում է առկա ձևում սովորողի կիսամյակային 20-շաբաթյա բեռնվածություն, որից 4-ը՝ քննական: Ծրագիրը բաղկացած է հետևյալ բաժիններից. I. Աշխարհայացքային և հաղորդակցական կրթամաս (29 կրեդիտ), II. Առողջապահական և բնագիտական կրթամաս (6 կրեդիտ), III. Ընդհանուր մասնագիտական կրթամաս (113 կրեդիտ), IV. Հատուկ մասնագիտական կրթամաս (69 կրեդիտ), V. Հետազոտական կրթամաս (23 կրեդիտ):
ՄԿԾ-ի նպատակը	ՄԿԾ-ի հիմնական <i>նպատակն</i> է ապահովել ՀՀ, նաև այլ երկրների տնտեսությունը որակյալ մասնագետներով, որոնք տիրապետում են ժամանակակից մաթեմատիկական գործիքակազմին և տեղեկատվական տեխնոլոգիաներին, սոցիալ-տնտեսական գործընթացների և համակարգերի, այդ թվում նաև ակտուարական և ֆինանսական, մաթեմատիկական մոդելների կառուցման և վերլուծության հմտություններին: ՄԿԾ-ի հիմնական <i>խնդիրներն</i> են. ✓ ուսանողների մոտ ձևավորել և զարգացնել ընդհանրական և մասնագիտական կոմպետենցիաներ, որոնք անհրաժեշտ են ապագայում մասնագիտական հաջող գործունեության, ինչպես նաև

	ուսումնառության հաջորդ փուլերում կրթությունը շարունակելու համար, ✓ տալ որակյալ ֆունդամենտալ կրթություն մաթեմատիկայի, տնտեսագիտության ոլորտում, ✓ ձևավորել մաթեմատիկական մոդելների կառուցման և տվյալների վերլուծության հմտություններ՝ ժամանակակից գործիքակազմի կիրառմամբ, ✓ սովորեցնել կիրառել ստացված գիտելիքները և հմտություններն ակտուարական և ֆինանսական խնդիրների լուծման ժամանակ:
ՄԿԾ-ի կրթական վերջնարդյունքները	Գիտենա ✓ բարձրագույն մաթեմատիկայի գործիքակազմը, ✓ կիրառական հետազոտությունների, օբյեկտների և գործընթացների՝ մասնավորապես ֆինանսական և վարկային ռիսկերի կառավարման և գնահատման, մաթեմատիկական մոդելավորման հիմնական մեթոդները, ✓ մասնագիտական գործունեության կիրառական խնդիրների լուծման թվային և օպտիմիզացիայի մեթոդները, ✓ ակտուարական և ֆինանսական հաշվարկների հիմունքները և առանձնահատկությունները, ✓ մասնագիտական կիրառական ծրագրային փաթեթները: Կարողանա ✓ ձևակերպել և լուծել մասնագիտական ոլորտի խնդիրներ, ✓ մշակել, համակարգել, վերլուծել տեղեկատվությունը տնտեսամաթեմատիկական մոդելների նախագծման համար, ✓ կազմել օպտիմալ մոդելներ ակտուարական և ֆինանսական նախագծերի համար, ✓ աշխատել թիմում: Տիրապետի ✓ ֆինանսների և ապահովագրության ոլորտում տնտեսամաթեմատիկական մոդելների կիրառման գործնական հմտություններին, ✓ տեղեկատվության հավաքագրման, մեկնաբանման և ներկայացման գործնական հմտություններին, ✓ ակտուարական և ֆինանսական նախագծերի օպտիմալ իրականացման գործնական հմտություններին, ✓ մասնագիտական ծրագրային փաթեթների կիրառման գործնական հմտություններին:
ՄԿԾ-ի յուրացման արդյունքում ձեռք բերվող կոմպետենցիաներ	«Ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտությամբ բակալավրի պատրաստման կրթական ծրագիրը կօգնի ուսանողների մոտ ձևավորել և զարգացնել ընդհանրական, մասնագիտական կոմպետենցիաներ, որոնք անհրաժեշտ են ապագայում մասնագիտական հաջող գործունեության, ինչպես նաև ուսումնառության հաջորդ փուլերում կրթությունը շարունակելու համար: ա) Ընդհանրական կոմպետենցիաներ «Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտությամբ

	բակալավորը պետք է տիրապետի հետևյալ ընդհանրական կոմպետենցիաներին. ԸԿ 1 Մայրենի լեզվով գրավոր և բանավոր հաղորդակցման հմտություններ, ԸԿ 2 Գործնական մակարդակով երկու օտար լեզվի իմացություն, ԸԿ 3 Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման հմտություններ մասնագիտական ոլորտում, ԸԿ 4 Տեղեկատվական տարբեր աղբյուրներից օգտվելու, վերլուծելու և ընդհանրացնելու կարողություն, ԸԿ 5 Հիմնախնդիրների քննարկման, գնահատման և դրանց լուծման կարողություն, ԸԿ 6 Անհատական և թիմային աշխատանքի կարողություն, ԸԿ 7 Գիտելիքները գործնականում կիրառելու, խնդիրներ ձևակերպելու և լուծելու կարողություն, ԸԿ 8 Ժամանակի և այլ ռեսուրսների արդյունավետ պլանավորման կարողություն: <i>բ) Մասնագիտական կոմպետենցիաներ</i> ՄԿ1 Ունենա հիմնարար գիտելիքներ մաթեմատիկայից ու տնտեսագիտությունից և կարողանա կիրառել բանկային և ֆինանսական համակարգերում, ապահովագրական ընկերություններում, կենսաթաշակային հիմնադրամներում և այլ ոլորտներում, ՄԿ2 Ունակ լինի ճշգրիտ և պարզ կերպով ներկայացնելու ֆինանսական մաթեմատիկայի դրույթները և դրանց հիմնավորումները, հիմնախնդիրները, լուծումները, ՄԿ3 Կարողանա ընկալել ֆինանսական նոր իրավիճակները, վերլուծություն կատարել այնպիսի պայմաններում, որոնք չեն դիտարկվել ուսումնառության ընթացքում և կառուցել համապատասխան մաթեմատիկական մոդելները, ՄԿ4 Գիտենա վիճակագրական, օպտիմիզացիոն, թվային և տնտեսաչափական հիմնական մեթոդները և դրանց օգտագործումը միկրոտնտեսագիտական, մակրոտնտեսագիտական, ռիսկերի կառավարման խնդիրների լուծման մեջ, ՄԿ5 Ունակ լինի գնահատել ֆինանսական և վիճակագրական մեթոդներով ռիսկերի կանխատեսելիությունն անորոշության պայմաններում: ՄԿ6 Ունակ լինի հասկանալու ապահովագրական խնդիրները, գնահատելու դրանց էությունը և լուծելու այդ խնդիրները, ՄԿ7 Տիրապետի մասնագիտական ծրագրային փաթեթներին և ունակ լինի օգտագործելու դրանք ֆինանսական ու ակտուարական մաթեմատիկայի և տնտեսագիտական խնդիրների լուծման և լրացուցիչ ինֆորմացիա ստանալու համար:
Ուսուցման և դասավանդման մոտեցումները	Ուսուցման իրականացման հիմնական ձևերն են. ✓ դասախոսություններ (այդ թվում՝ էլեկտրոնային կրթական հարթակների միջոցով), ✓ գործնական պարապմունքներ, սեմինարներ, լաբորատոր աշխատանքներ

	(այդ թվում՝ էլեկտրոնային կրթական հարթակների միջոցով), ✓ ուսանողի ինքնուրույն աշխատանքներ (ռեֆերատ, նախագիծ և այլն), ✓ կուրսային աշխատանք, ավարտական աշխատանք, ✓ արտադրական պրակտիկա:
Գիտելիքների գնահատման մեթոդները	Ուսանողների գիտելիքների գնահատումն իրականացվում է պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգով/ <u>ԿԱՆՈՆԱԿԱՐԳ «ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ, ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ (01.09.2023)՝</u> Ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է ECTS գնահատման համակարգին համապատասխանող գնահատականների 100 միավորանոց սանդղակը՝ հետևյալ բաղադրիչների գնահատմամբ և հաշվառմամբ. ✓ ծրագրով նախատեսված ինքնուրույն առաջադրանքների կատարման և յուրացման ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում /ինքնուրույն աշխատանք/, ✓ դասընթացի առանձին թեմաներից ուսանողի կողմից դրսևորած ակտիվության, հմտությունների և կարողությունների ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում /գործնական ստուգումներ/, ✓ դասընթացի ենթաբաժինների յուրացման գնահատում կիսամյակի ընթացքում /երկու ընթացիկ քննություն կամ ստուգաքն/:
Մասնագիտական գործունեության ոլորտները.	056802.00.6 Ֆինանսական մաթեմատիկա մասնագիտության ծրագրի շրջանավարտների <i>հնարավոր աշխատատեղերի և մասնագիտական գործունեության ոլորտներ</i> . ✓ ապահովագրական ընկերություններ, կենսաթոշակային հիմնադրամներ (ապահովագրական գործունեություն), ✓ բանկեր, ներդրումային ընկերություններ, ֆոնդային բորսաներ, ցանկացած ֆինանսական ընկերություններում ռիսկերի կառավարման բաժիններ, աուդիտորական ընկերություններ և ապահովագրական ոլորտի աուդիտի բաժիններ (ֆինանսական և բանկային գործնեություն), ✓ ֆինանսական շուկաների ծառայություն, վիճակագրական վարչություններ (հանրային հատվածում՝ կենտրոնական բանկում, վերլուծական գործունեություն):
Հետագա ուսման հնարավորությունները	«Ֆինանսական մաթեմատիկա» մասնագիտությամբ բակալավրի հիմնական կրթական ծրագիրը յուրացրած շրջանավարտը պատրաստ է կրթությունը շարունակելու. ✓ մագիստրատուրայում՝ ստանալով համապատասխան մասնագիտությամբ մագիստրոսի որակավորման աստիճան: